

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ**

**Գրիգոր ՆԱԶԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

**Դավիթ ՀԱՆՎԵՐԴՅԱՆ**

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր

Բանալի բառեր. սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, ինստիտուցիոնալ  
համակարգ, ժողովրդավարություն, տնտեսական ազատություն, տնտեսական աճ

Համաշխարհային տնտեսագիտական մտքի առանցքը երկրների հա-  
մար տնտեսական աճի և բնակչության բարեկեցության համար անհրաժեշտ  
նախադրյալների հետազոտությունն է: Հատկանշական է, որ տնտեսական ա-  
ճի տեսությունները ձևավորվել են գլխավորապես 20-րդ դարի ընթացքում,  
երբ մշակվեցին տնտեսական աճի աղբյուրների ինչպես ավանդական,  
այնպես էլ այլընտրանքային մոտեցումները: Նեոդասական տեսության մեջ  
առանցքային դերը պատկանում է ֆիզիկական և մարդկային կապիտալի կու-  
տակումը, արտադրության արտադրողականության բարձրացման հետ միա-  
սին որպես տնտեսական աճի հիմնական դետերմինանտներ բնորոշող մոդե-  
լին<sup>1</sup>: Ավանդական մոդելները, այնուհանդերձ, սահմանափակվում էին այս  
փաստի ամրագրմամբ, պատշաճ ուշադրություն չդարձնելով արտադրողա-  
կանության բարձրացման աղբյուրների հետազոտությանը: Հետագայում տե-  
ղի ունեցավ անցում տնտեսա-կան աճի էկզոգեն փոփոխականներից դեպի  
էնդոգեն փոփոխականներ, որի հիմնական նպատակը արտադրողականու-  
թյան աճի գործոնների բացահայտումն էր և տնտեսական աճի վրա դրանց  
ազդեցության չափի գնահատումը: Սոլոուի մոդելում ներմուծվեց գիտելիքի  
կուտակումը բնորոշող նոր փոփոխական, որն ընդունվում էր որպես ԳՏԱ-ի  
հիմք<sup>2</sup>:

Անժխտելի է, որ ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնող քա-  
ղաքական գործիչները նախընտրում են փոխառել առավել առաջադիմական  
ինստիտուտները, ջանալով առավելագույնս արագացնել ինստիտուցիոնալ  
զարգացումը: Այդ ձգտումը հենց հանգեցնում է սխալների: Այսպես, «երրորդ

<sup>1</sup> Solow R.M. Growth theory and after // The American Economic Review. – Vol. 78 – N3 (June, 1988). – p. 308.

<sup>2</sup> Endogenous innovation in the theory of growth // The Journal of Economic Prospective. – Vol. 8. – N1 (Winter, 1994). – p. 28.

աշխարհի» բազմաթիվ երկրներում վարչարարության արևմտյան սկզբունքների իմիտացիայի բոլոր ջանքերն անհաջողությամբ պսակվեցին, քանի որ այդ սկզբունքները հակասում էին ազգային բարոյական և մշակութային նորմերին<sup>3</sup>:

Առաջին հայացքից թվում է, թե ազատական բարեփոխումներն ավելի հեշտ են, քան եկամուտների վերաբաշխումն ու զարգացման խթանումը: Այդ պատճառով, թույլ զարգացած և ցածր որակավորում ունեցող քաղաքական վերնախավի համար լավագույն լուծումն իր լիազորությունների գերակշիռ մասի փոխանցումն է մասնավոր հատվածին: Այս տեսակետն ընդունելի չէ, հատկապես, եթե խոսքը վերաբերում է լայնամասշտաբ վերափոխումներին: Ինստիտուցիոնալ շինարարությունը բարդ աշխատանք է, որը պահանջում է պետական կառավարման բազմաթիվ գործիքների հստակ տիրապետում: Եթե պետական վարչակարգն ունակ չէ սոցիալական և արդյունաբերական ռացիոնալ քաղաքականություն վարել, ապա նա, ամենայն հավանականությամբ, չի կարող իրականացնել նաև արդյունավետ ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Այդ պատճառով, պետական վարչակարգի աշխատանքների կատարելագործումը պետք է հանդիսանա բարեփոխումների առաջին և կարևորագույն կետը<sup>4</sup>:

Հայտնի է, որ այն երկրներում, որտեղ երկար ժամանակ գերիշխել է կենտրոնացված պլանավորումը, անցումն օրենքի գերակայությամբ և շուկայական ազատությամբ ժողովրդավարության տեղի է ունենում ավելի դանդաղ, քան “փոքր” կառավարությամբ, շուկայական տնտեսավարման փորձ և ազատության մասին հիշողություն ունեցող երկրներում:

Իրավափիլիսոփայական միտքը վաղուց փաստել է, որ Եվրոպայում, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայում ժողովրդավարության զարգացումն օրգանապես կապված է մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների հաստատման հետ<sup>5</sup>:

---

<sup>3</sup> Полтерович В.М. Трансплантация экономических институтов, Постсоветский институционализм. / Под ред. Р.М. Нуреева, В.В. Дементьева. – Донецк: «Каштан», 2005, с. 392.

<sup>4</sup> Առավել մասնրամասն՝ Кузьминов Я.И. Модернизация государства: идеи и контуры // Инвестиционный климат и перспективы экономического роста в России / Под ред. Е.Г. Ясина. Кн. 1. – М.: ВШЭ, 2001. – с. 191-201; Паринсон Н. Реформа государственного управления в России: проблемы и пути их решения // Инвестиционный климат и перспективы экономического роста в России / Под ред. Е.Г. Ясина. Кн. 1. – М.: ВШЭ, 2001.

<sup>5</sup> Մասնավորապես տե՛ս Տրաշուն Բ. Перспективы демократии и конституционное правосудие. Альманах-Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван, 2002, էջ 217, Հարությունյան Գ.Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները.-Եր., Նժար, 2003, էջ 33:

Հետսոցիալիստական երկրներից այն երկրները, որոնք ունեին ազատականության նախապատերազմյան փորձ (Հունգարիա, Լեհաստան, Սլովենիա, Սլովակիա, Չեխիա և Բալթյան երկրներ), ավելի արագ են շարժվում ժողովրդավարական կապիտալիզմի ուղղությամբ:

Առաջընթացը ավելի դանդաղ տեմպերով է տեղի ունենում ԱՊՀ երկրներում, որտեղ երկար տարիների ընթացքում գոյություն է ունեցել արտակարգ ուժեղ պետական վերահսկողություն կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ և որոնք հնարավորություն չեն ունեցել շուկայի կամ քաղաքակիրթ հասարակության ձևավորման համար:

Պետության սոցիալական տիպը, որը ստեղծվել էր ԽՍՀՄ-ում, կառուցվել էր մի քաղաքական հոսանքի՝ մարքս-լենինյան գաղափարախոսության հենքի վրա, որի տնտեսական համակարգը արտադրության միջոցների պետական անարդյունավետ սեփականությունն էր, պետական կառավարման զինանոցում գերակշռում էին վարչական մեթոդները, խիստ սահմանափակ էր տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ազատությունը, համակարգում բացակայում էր զարգացման բնական շարժիչ ուժը՝ մրցակցությունը: Նման քաղաքական ու տնտեսական համակարգը կա՛մ պետք էր էականորեն բարեփոխել, կա՛մ օրինաչափորեն փոխարինվեր առավել առաջադիմական քաղաքական և տնտեսական համակարգով ու դրան համապատասխան՝ պետական կառավարման մեխանիզմով, ինչը տեղի ունեցավ 1991 թվականին<sup>6</sup>:

Հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, անցումային շրջանի դասերից մեկը եղավ քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների և գիտնականների վերաբերմունքի փոփոխությունը ինստիտուտների համակարգի՝ որպես երկրի սոցիալ-տնտեսական համակարգի բաղկացուցիչ մասի, նկատմամբ: Վերափոխումների սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ բավական է փոխել, ավելի կոնկրետ՝ քանդել տնտեսության կենտրոնացված կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը, որոնք, համընդհանուր կարծիքով, խոչընդոտում էին տնտեսական զարգացման հիմնական խթաններին և երկրները շատ արագ կհամալրեն աշխարհի ամենազարգացած երկրների շարքերը: Ընդ որում, վարչական բոլոր մարմինները ներկայացվում էին որպես տնտեսական զարգացման վարչական խոչընդոտներ:

Արդյունքում, շատ կարճ ժամկետներում կազմալուծվեց երկրի տնտեսական և սոցիալական գործակալների վարքագիծը բնորոշող ինստիտուտ-

<sup>6</sup> Յու.Սուվարյան, Հայաստանում հանրային կառավարման տեսության և պատմության ուրվագծեր, «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», Երևան, 2004, 1, էջ 28-29:

ների համակարգի մեծ մասը, այսինքն, 1970-80-ական թվականների ինստիտուցիոնալ համակարգը փոխարինվեց 1990-ական թվականների «թերինստիտուցիոնալ» միջավայրով<sup>7</sup>:

Անցումը շուկայական տնտեսությանը Հայաստանում իրագործվեց ազատականացման ուղու վերաբերյալ մոտ և հեռու արտասահմանի հանձնարարականների պարզունակ տեղայնացման և (կամ) զուտ քաղաքական նպատակներ հետապնդող մոտեցումների ներդրման միջոցով: Հավուր պատշաճի չգնահատվեցին մեկնարկային տնտեսական իրողությունները, կառավարման և կառուցվածքային ձևափոխումների ասպարեզում դրսևորվեցին անիրազեկություն և ծայրահեղականություն, որոնք չէին կարող չնպաստել հանրապետության տնտեսության փլուզմանը<sup>8</sup>:

Դրա հետ մեկտեղ, տնտեսության ազատականացման քաղաքականությանը՝ որպես առանձին երկրների տնտեսությունների զարգացման կարևոր միջոց, գործնականում գոյություն չունի, քանի որ և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներն իրենց տնտեսական քաղաքականությունն իրականացնելիս հաճախ են հովանավորում սեփական արտադրությունը<sup>9</sup>: Ադյուսակներ 1-ում և 2-ում բերված են հետսոցիալիստական երկրների ցուցանիշներն ըստ ժողովրդավարացման, իրավունքի նորմերին հետևելու, ազատականացման աստիճանի և այլ նորմերի՝ համաձայն Freedom House-ի ուսումնասիրությունների:

---

<sup>7</sup> Клейнер Г.Б. Институциональные изменения: Проектирование, селекция или протезирование? Постсоветский институционализм. / Под ред. Р.М. Нуреева, В.В. Дементьева. – Донецк: «Каштан», 2005, с. 408.

<sup>8</sup> Հ.Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը, ՌԱՀՀԿ, Երևան, 2001, էջ 15-16:

<sup>9</sup> Գ.Կիրակոսյան, Գլոբալացումը և դրա հետևանքները, “Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի”, Երևան, 2004, 1, էջ 7:

**Աղյուսակ 1.**

Հետսոցիալիստական երկրների վարկանիշը ըստ ժողովրդավարացման, իրավունքի նորմերին հետևելու և ազատականացման աստիճանի (1999 – 2014թթ.)<sup>10</sup>

ԵՐԿԻՐ	1999–2004	2006	2008	2010	2012	2014
Սլովենիա	1.80	1.75	1.86	1.93	1.89	1.93
Էստոնիա	2.02	1.96	1.93	1.96	1.93	1.96
Լատվիա	2.22	2.07	2.07	2.18	2.11	2.07
Լեհաստան	1.70	2.14	2.39	2.32	2.14	2.18
Չեխիա	2.31	2.25	2.14	2.21	2.18	2.25
Լիտվա	2.17	2.21	2.25	2.25	2.29	2.36
Սլովակիա	2.21	1.96	2.29	2.68	2.5	2.61
Հունգարիա	1.99	2.00	2.14	2.39	2.86	2.96
Բուլղարիա	3.36	2.93	2.86	3.04	3.14	3.25
Ռումինիա	3.62	3.39	3.36	3.46	3.43	3.46
Սերբիա	3.83	3.71	3.79	3.71	3.64	3.64
Խորվաթիա	3.81	3.71	3.64	3.71	3.61	3.68
Մոնտենեգրո	3.83	3.89	3.79	3.79	3.82	3.86
Մակեդոնիա	4.13	3.82	3.86	3.79	3.89	4.00
Ալբանիա	4.26	3.79	3.82	3.93	4.14	4.18
Բոսնիա-Հերց.	4.72	4.07	4.11	4.25	4.36	4.43
Վրաստան	4.67	4.86	4.79	4.93	4.82	4.68
Մոլդովա	4.65	4.96	5.00	5.14	4.89	4.86
Ուկրաինա	4.78	4.21	4.25	4.39	4.82	4.93
Կոսովո	5.50	5.36	5.21	5.07	5.18	5.14
Հայաստան	4.91	5.14	5.21	5.39	5.39	5.36
Դրոգստան	5.54	5.68	5.93	6.21	6.00	5.89
Ռուսաստան	5.01	5.75	5.96	6.14	6.18	6.29
Տաջիկստան	5.72	5.96	6.07	6.14	6.18	6.32
Ղազախստան	6.05	6.39	6.39	6.43	6.54	6.61
Ադրբեջան	5.56	5.93	6.00	6.39	6.57	6.68
Բելառուս	6.45	6.64	6.68	6.5	6.68	6.71
Թուրքմենստան	6.84	6.96	6.93	6.93	6.93	6.93
Ուզբեկստան	6.45	6.82	6.86	6.93	6.93	6.93
Նախկին ԽՍՀՄ, ԿԱԵ	4.09	4.15	4.19	4.28	4.31	4.35

<sup>10</sup>Nations in Transit 2014: Ratings and Democracy Score Summary, <https://freedomhouse.org/sites/default/files/Data%20tables.pdf>  
 Nations in Transit 2014: Eurasia’s Rupture with Democracy; [https://freedomhouse.org/sites/default/files/NIT2014%20booklet\\_WEBSITE.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/NIT2014%20booklet_WEBSITE.pdf)

**Աղյուսակ 2. Ֆրիդոմ Ֆաուզի գնահատականները Եվրոպայի և Եվրասիայի նախկին սոցիալիստական 29 երկրների 2013թ. ժողովրդավարական զարգացումների վերաբերյալ (2014թ.)<sup>11</sup>**

Երկիր	Համախառն ինդեքս	Այլ թվում՝							
		Ընտրական գործընթաց	Քաղաքացիական հասարակություն	Լրատվամիջոցների անկախություն	Ազգային-ժողովրդավարական կառավարում	Տեղական ժողովրդավարական կառավարում	Դատ. համակ. և բարատարանների հանկ	Կոռուպցիայի մակարդակը	Միտությունների ցուցիչ
Սլովենիա	1.93	1.50	2.00	2.25	2.00	1.50	1.75	2.5	1
Էստոնիա	1.96	1.75	1.75	1.50	2.25	2.50	1.50	2.50	1
Լատվիա	2.07	1.75	1.75	2.00	2.00	2.25	1.75	3.00	2
Լեհաստան	2.18	1.25	1.50	2.50	2.50	1.50	2.50	3.50	1
Չեխիա	2.25	1.25	1.75	2.75	3.00	1.75	1.75	3.50	1
Լիտվա	2.36	2.00	1.75	2.25	2.75	2.50	1.75	3.50	1
Սլովակիա	2.61	1.50	1.75	2.75	3.00	2.50	3.00	3.75	1
Յունգարիա	2.96	2.25	2.25	3.50	3.75	2.75	2.50	3.75	1,5
Բուլղարիա	3.25	2.25	2.25	4.00	3.75	3.00	3.25	4.25	2
Ռումինիա	3.46	3.00	2.50	4.25	3.75	3.00	3.75	4.00	2
Սերբիա	3.64	3.25	2.25	4.00	3.75	3.50	4.50	4.25	2
հյոթվաթիա	3.68	3.25	2.75	4.00	3.50	3.75	4.51	4.00	1,5
Մոնտենեգրո	3.86	3.50	2.75	4.25	4.25	3.25	4.00	5.00	2,5
Մակեդոնիա	4.00	3.25	3.25	5.00	4.25	3.75	4.25	4.25	3
Ալբանիա	4.18	4.00	3.00	4.00	4.75	3.50	4.75	5.25	3
Բուս.-Հերց.	4.43	3.25	3.50	4.75	5.75	4.75	4.25	4.75	3
Վրաստան	4.68	4.50	3.75	4.00	5.50	5.50	5.00	4.50	3
Մոլդովա	4.86	4.00	3.25	5.00	5.50	5.75	4.75	5.75	3
Ուկրաինա	4.93	4.00	2.50	4.25	6.00	5.50	6.00	6.25	3,5
Կոսովո	5.14	4.75	3.75	5.75	5.50	4.75	5.50	6.00	4,5
Հայաստան	5.3	5.7	3.7	5.75	5.75	5.7	5.5	5.2	<b>4,5</b>
Ղրղզստան	5.89	5.50	4.50	6.00	6.50	6.25	6.25	6.25	5
Ռուսաստան	6.29	6.75	5.75	6.25	6.50	6.00	6.00	6.75	5,5
Տաջիկստան	6.32	6.75	6.25	6.25	6.50	6.00	6.25	6.25	6
Ղազախստան	6.61	6.75	6.50	6.75	6.75	6.50	6.50	6.50	5,5

<sup>11</sup> Աղբյուրը՝ Nations in Transit 2014: Ratings and Democracy Score Summary, <https://freedomhouse.org/sites/default/files/Data%20tables.pdf>  
 Nations in Transit 2014: Eurasia’s Rupture with Democracy; [https://freedomhouse.org/sites/default/files/NIT2014%20booklet\\_WEBSITE.pdf](https://freedomhouse.org/sites/default/files/NIT2014%20booklet_WEBSITE.pdf)  
 Freedom in the World 2014/ The Democratic Leadership Gap. <http://www.freedomhouse.org/sites/default/files/Freedom%20in%20the%20World%202014%20Booklet.pdf>

Ադրբեջան	6.68	7.00	6.50	6.75	6.75	6.50	6.50	6.75	6
Բելառուս	6.71	7.00	6.50	6.75	6.75	6.75	7.00	6.25	6,5
Թուրքմենիա	6.93	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	7
Ուզբեկստան	6.93	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	7
Նախկին ԽՍՀՄ, ԿԱԵ երկրների միջինը	4.3	3.9	3.5	4.53	4.72	4.2	4.4	4.8	3,2

Գործնականում բոլոր հետխորհրդային երկրները (բացառությամբ մերձ-բալթյան երկրների) էապես զիջում են Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներին, որոնք ազատական տնտեսական և քաղաքական հասարակարգի փորձ են ունեցել: Այսպես, Սլովենիային բնորոշ են ինչպես ժողովրդավարացման մակարդակի, այնպես էլ տնտեսական ազատականացման աստիճանի ամենաբարձր ցուցանիշները (համապատասխանաբար՝ 1,93 և 1,0): Հայաստանն ունի ժողովրդավարացման մակարդակի և տնտեսական ազատականացման հարաբերականորեն ցածր վարկանիշ (համապատասխանաբար՝ 5,36 և 4,5)<sup>12</sup>:

Համաձայն “Ազգերը անցումային փուլում 2014” հետազոտության<sup>13</sup>, Հայաստանում ժողովրդավարության առաջընթացի համախառն ինդեքսը նախորդ տարվա համեմատ չի փոխվել և 2014թ. կազմել է “5.36” միավոր, որը Հայաստանին ապահովում է 21-րդ տեղը դիտարկված 29 երկրների թվում:

Համաձայն Ֆրիդոմ Հաուզի դասակարգման, Հայաստանը “5.36” գնահատականով դասվում է “կիսահամախմբված ավտորիտար ռեժիմ” ունեցող երկրների (Կոսովո, Ղրղզստան) շարքը: Նկատենք, որ Ռուսաստանը, Տաջիկստանը, Ղազախստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Թուրքմենստանն ու Ուզբեկստանը դիտարկվում են որպես “համախմբված ավտորիտար ռեժիմ” ունեցող երկրներ:

Հայաստանում ժողովրդավարության առաջընթացի համախառն գնահատականի հիմքում ընկած նյութ գործոնները՝ ընտրական գործընթացի, քաղաքացիական հասարակության զարգացումների, ազգային և տեղական ժողովրդավարական կառավարման մակարդակների, դատական համակար-

<sup>12</sup> Ընդհանուր առմամբ, բերված տվյալներին պետք է մոտենալ մի փոքր թերահավատությամբ՝ կապված գնահատման մեթոդաբանության սուբյեկտիվության հետ: Սակայն հարկ է նշել, որ առավել ընդհանուր միտումները վարկանիշը արտացոլում է բավականին համարժեք: Գնահատման մեթոդաբանությանը ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ <http://www.freedomhouse.org> կայքում:

<sup>13</sup> Տե՛ս Ֆրիդոմ Հաուզի “Ժողովրդավարության առաջընթացի 2014 թ. ինդեքս”, <http://www.freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2013>:

գի անկախության և կոռուպցիայի մակարդակի գնահատականները ևս նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ (տե՛ս աղյուսակներ 1 և 2): Այսպիսով, ներկայումս Հայաստանի գնահատականներից ամենաբարձրը “Քաղաքացիական հասարակության” զարգացումների գնահատականն է (3.75), որով Հայաստանը 29 երկրների շարքում գրավում է 21-րդ տեղը: Թեպետ մյուս բոլոր գնահատականները զգալիորեն ցածր են այս գնահատականից, սակայն իրենց դիրքով շատ չեն տարբերվում վերջինից: Մասնավորապես, “Կոռուպցիայի” մակարդակի գնահատականով (5.50 միավոր) Հայաստանը գրավում է 18-րդ տեղը, “Ազգային-ժողովրդավարական կառավարման” և “Դատական համակարգի ու դրա անկախության” գնահատականներով (համապատասխանաբար՝ 5.75 և 5.50 միավոր) գրավում է 20-րդ տեղը, “Լրատվամիջոցների անկախության” և “Տեղական ժողովրդավարական կառավարման” գնահատականներով (երկուսն էլ 5.75 միավոր)՝ 21-րդ տեղը, իսկ “Ընտրական գործընթացի” գնահատականով (5.75 միավոր)՝ 22-րդ տեղը:

Նախկին ԽՍՀՄ երկրների թվում ժողովրդավարության առաջընթացի մակարդակով Հայաստանը զիջում է մերձբալթյան երկրներին, Վրաստանին, Մոլդովային և Ուկրաինային: Իսկ ինչ վերաբերում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, ժողովրդավարության առաջընթացով Հայաստանը զիջում է այդ տարածաշրջանի բոլոր երկրներին:

Ֆրիդոմ Հաուզի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես նախորդ տասը տարիների ընթացքում, այնպես էլ 2013թ., ժողովրդավարության միջին գնահատականը նվազել է: Մասնավորապես, դիտարկված 29 երկրներից 16-ում ժողովրդավարացման գործընթացները վատացել են, 5-ում՝ բարելավվել և 8-ում՝ մնացել անփոփոխ (տե՛ս աղյուսակ 2): Ընդ որում, 13 երկիր վարկանշվել են որպես “ժողովրդավարական”, 6-ը՝ “անցումային” և 10-ը՝ “ավտորիտար” ռեժիմ ունեցող երկրներ: Բացի այդ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում (Սլովենիայում, Լեհաստանում, Չեխիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Մակեդոնիայում) ավելացել է կոռուպցիան: Տնտեսական և քաղաքական ճնշումները հանգեցրել են Լատվիայում, Լիտվայում և Չեխիայում “Լրատվամիջոցների անկախություն” վարկանիշի իջեցմանը<sup>14</sup>:

Հայաստանի և հետխորհրդային մի շարք երկրների աննշան առաջընթացը զարմանալի չէ, քանի որ ժամանակ է պահանջվում այդքան տարիների

---

<sup>14</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայքը՝ [https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/For%20webpage\\_04.07.14.pdf](https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/For%20webpage_04.07.14.pdf).



ամբողջատիրական ռեժիմից հետո մարդկանց մտածելակերպը փոխելու համար:

Անցումային շրջանում, երբ շուկայական տնտեսության և իրավական պետության շուկայական ինստիտուտները և հատկապես օրենքներն ու դրանց գործադրման մեխանիզմները դեռևս կայացման փուլում են, խիստ մեծանում է հավանականությունը, որ կոռուպցիոն հարաբերությունները շատ դեպքերում կլինեն ավելի նախընտրելի, քան օրինական ճանապարհները<sup>15</sup>:

Այդ ծուղակում չհայտնվելու համար նոր ժողովրդավարական պետությունները պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեն կառավարության իշխանության սահմանափակմանը, այսինքն՝ որոշեն կառավարության տեղն ազատ հասարակության մեջ: Դա անհրաժեշտ է ոչ միայն տնտեսության ամրապնդման, այլ նաև մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համար: Այս առումով, Մ.Ֆրիդմանը նշել է. «Այն դեպքում, երբ տնտեսական ազատությունը նպաստում է քաղաքական ազատությանը, քաղաքական ազատությունը տնտեսական ազատությունը ոչնչացնելու միտում ունի»<sup>16</sup>:


Հետսոցիալիստական երկրների վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ առավել բարձր աստիճանի տնտեսական ազատականացմամբ պետություններին նաև բնորոշ է ավելի բարձր աստիճանի ժողովրդավարացում (տե՛ս գծապատկեր 1՝ կառուցված ըստ աղյուսակ 2-ի տվյալների):

Այն հանգամանքը, որ այս երկու ցուցանիշները շարժվում են միևնույն ուղղությամբ, հուշում է, որ դրանք կարող են փոխադարձաբար ուժեղացնել միմյանց, ծայրահեղ դեպքում՝ մինչև որոշակի կետ: Սակայն նկատենք, որ այդ կետը կախված է պետության ազդեցության չափերից և ոլորտից: Եթե ընտրովի ժողովրդավարությունը սահմանափակված է ազատության սահմանադրական ոգով, համընդհանուր ընտրական իրավունքը վտանգ չի ներկայացնի ո՛չ քաղաքական, ո՛չ տնտեսական ազատության համար:

---

<sup>15</sup> Ա.Մարգարյան, Տնտեսական համակարգի բարեփոխումները սիներգետիկ մեթոդաբանության համատեքստում, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2008, 1(13), էջ 12:

<sup>16</sup> Friedman M. Economic Freedom, Human Freedom, Political Freedom. The Smith Center for Private Enterprise Studies, Inaugural Lecture, November 1, 1991. Hayward, Calif., The Smith Center for Private Enterprise Studies, 1992, p. 7.



**Պատկեր 1.** Ժողովրդավարացման և տնտեսական ազատականացման փոխադարձ կախվածությունը հետսոցիալիստական երկրներում<sup>17</sup>

Իսկապես, սոցիալիզմի և կենտրոնացված պլանավորման պայմաններում տնտեսական ազատականացումն, ի վերջո, պահանջում է քաղաքական բարեփոխումների իրականացում<sup>18</sup>:

Հատկանշական է, որ սեփականության և սեփականատիրոջ անձեռնմխելիության երաշխիքների թուլացումը կամ վերացումը կարող է տեղի ունենալ ոչ միայն դատարանների և/կամ մամուլի անկախության թուլացման, հանցավորության աճի կամ գաղափարախոսական խզման, այլ, առաջին հերթին, ինստիտուցիոնալ բարեփոխումները երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման տեսլականին չհամապատասխանելու պատճառով<sup>19</sup>:

Անցումային շրջանի առանձնահատկությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ փոփոխությունների հեղափոխականությամբ, որի հետևանք-

<sup>17</sup> Հախվերդյան Դ., Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կարգավորող ինստիտուտները գլոբալացման պայմաններում / Դավիթ Հախվերդյան; Մասն. խմբ.՝ Աշոտ Մարկոսյան. - Եր.: Զեղ. հրատ., 2013.- էջ 130:

<sup>18</sup> Հախվերդյան Դ., Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կարգավորող ինստիտուտները գլոբալացման պայմաններում / Դավիթ Հախվերդյան; Մասն. խմբ.՝ Աշոտ Մարկոսյան. - Եր.: Զեղ. հրատ., 2013.- էջ 125-131:

<sup>19</sup> Институциональные ограничения современного экономического роста / В.С. Лисин, К.Э. Яновский и др. — М.: Издательский дом «Дело» РАНХиГС, 2011. с. 125.

քով ամրագրվում է ուղղահայաց կախվածություն տնտեսական աճի դետերմինանտների միջև: Նոր տնտեսական համակարգին անցման պայմաններում տնտեսական աճի գործոնների ի հայտ գալու ինտենսիվությունը պայմանավորված է ներդրված ինստիտուտների որակով և դրանց մոտիվացիոն մեխանիզմի կատարելությամբ: Վերջինիս որակն, իր հերթին, կախված է քաղաքական միջավայրից, որը զբաղված է նոր տնտեսական մոդելի ինստիտուցիոնալ հիմքի ձևավորմամբ:

Հետխորհրդային երկրները զգալի աշխատանքներ են կատարել իրենց տնտեսությունների ինստիտուցիոնալ հիմքերի փոփոխության ուղղությամբ: Թեև ստացված արդյունքներն այդ երկրներում էապես տարբերվում են, սակայն մեծամասամբ իրենց մեջ պարունակում են շուկայական տնտեսավարման տարրեր: Սակայն անցումային գործընթացը չպետք է սահմանափակվի տնտեսության առանցքային փոփոխությունների իրականացմամբ, այլ պետք է տարածվի այն ժամանակահատվածի վրա, որի ընթացքում ձեռք կբերվի բնակչության բարձր կենսամակարդակը: Վերջինիս կենսագործման համար անհրաժեշտ է կատարելագործել ներմուծված յուրաքանչյուր նոր ինստիտուտը, նոր տնտեսական համակարգը հարմարեցնել առանձնահատուկ ազգային պայմաններին, որի արդյունքում հնարավոր կդառնա օգտագործել տնտեսական աճի այն ներուժը, որոնցով օժտված են տվյալ երկրները<sup>20</sup>:

Կառավարության գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և զգայունության ցուցանիշների օգտագործումը ստիպում է ավելի մեծ ուշադրություն դարձնել բյուջետային համակարգի բարեփոխումների, ձեռնարկատիրության պետական կարգավորման, հեռահաղորդակցության ծառայությունների և համակարգչայնացման մակարդակի հետ կապված հարցերի վրա<sup>21</sup>:

Վերը նշված հետազոտությունները վկայում են, որ «վերևից» նոր նորմերի ներմուծման դյուրինությունը խաբուսիկ է: Առավելագույնը, որ կարող են հույս ունենալ ներքին ինստիտուտների «նախագծողները» կամ այլ ինստիտուցիոնալ միջավայրից «փոխառած» բաղադրիչները ներդրողները, դա, այսպես կոչված, «քվադրիինստիտուտների»<sup>22</sup> ստեղծումն է, որոնք նախա-

---

<sup>20</sup> Тамилина Л.В. Исследование роли институциональных детерминантов экономического роста в странах с переходной экономикой, Постсоветский институциона-лизм./Под ред. Р. Нуреева, В.В. Дементьева. – Донецк: «Каштан», 2005, с. 323-324.

<sup>21</sup> Beetham D. The Idea of Democratic Audit in Comparative Perspective // Parliamentary Affairs. A Journal of Comparative Politics. 1999. Vol. 52. N 54.

<sup>22</sup> Корнаи Я. Системная парадигма. // Вопросы экономики. – 2002. – N4. – с. 4-17.

տեսված են որոշակի ժամանակահատվածում որոշակի ֆունկցիոնալ խնդիր-ներ լուծելու համար:

Կարելի<sup>6</sup> է արդյոք ինստիտուցիոնալ փոփոխություններն իրականացնել էվոլյուցիոն ճանապարհով: Վերջինիս իրականացումը պահանջում է հետևյալ պարտադիր քայլերը. առաջին հերթին, ինստիտուցիոնալ համակարգի ներառումը ներերկրային այլ համակարգերի շղթայի մեջ, որը թույլ չի տա հեղափոխական փոփոխություններին, նույնիսկ եթե դրանք տեղի ունենան, արմատավորվել երկրի տնտեսական համակարգում: Երկրորդ հերթին, ինստիտուցիոնալ փոփոխությունների գործընթացը հիմնվում է «նախաինստիտուտների վերախմբագրման» վրա, որը պահպանում է ինստիտուտների նախնական բնութագրերը: Երրորդ հերթին, ինստիտուցիոնալ գործընթացներին արտադրական կազմակերպությունների էական մասնակցությունը զսպում է ինստիտուտների դուրսմղումը «ժառանգական» զարգացման շրջանակներից:

Դրա հետ մեկտեղ, ինստիտուտների փոխառումը էապես տարբերվում է տեխնոլոգիաների փոխառումից: Մասնավորապես, եթե տեխնոլոգիաներն ըստ առաջընթացի մակարդակի (թեկուզև՝ ըստ արտադրողականության) ենթարկվում են որոշակի դասակարգման և կանոնակարգման, ապա ինստիտուտների համար նման կանոնակարգումն անհնար է<sup>23</sup>:

Մեր կարծիքով, տվյալ երկրի ինստիտուցիոնալ համակարգի որակի փոքրի-շատե օբյեկտիվ չափանիշը նրա ամբողջականությունն է, որը հասկացվում է երկու իմաստով: Առաջին հերթին, դա երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող ինստիտուցիոնալ համակարգի կազմի լրիվությունն ու տարրերի միջև կապերի սերտությունն է և, երկրորդ հերթին, համապատասխանությունն է յուրաքանչյուր երկրին բնորոշ սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր ուղեգծին: Առաջին պայմանն արտացոլում է ինստիտուցիոնալ տարածությունում դրանց ներդաշնակությունը, իսկ երկրորդը՝ ժամանակի և տարածության մեջ ինստիտուցիոնալ փոփոխությունների սահմանափակվածությունը:

Վերը նշված երկու պայմանների կատարման անհրաժեշտ նախադրյալը ինստիտուցիոնալ համակարգի ներդաշնակ փոխազդեցությունն է մշակութային, արժեքային և էվոլյուցիոն-գենետիկ համակարգերի հետ: Այս ամենը վկայում է այն մասին, որ ինստիտուցիոնալ համակարգերի վերափոխումների ժամանակ գործողությունների ազատությունը սահմանափակված է:

---

<sup>23</sup> Aoki M. *Toward a Comparative Institutional Analysis*. – Cambridge, MA, MIT Press, 2001.

**Գրիգոր ՆԱԶԱՐՅԱՆ, Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

**Հայաստանի սոցիալ-տնտեսական բարեփոխումների ինստիտուցիոնալ հիմքերը**

*Բանալի բառեր. սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, ինստիտուցիոնալ համակարգ, ժողովրդավարություն, տնտեսական ազատություն, տնտեսական աճ*

Հայաստանում սոցիալ-տնտեսական վերափոխումների սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ բավական է փոխել տնտեսության կենտրոնացված կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը և երկիրը կհամալրի աշխարհի զարգացած երկրների շարքերը: Սակայն ինստիտուցիոնալ համակարգի որակի հիմնական չափանիշը նրա ամբողջականությունն է երկու հմաստով՝ ինստիտուցիոնալ համակարգի կազմի լրիվության ու տարրերի միջև կապերի սերտության և յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր ուղեգծին համապատասխանության:

**Григор НАЗАРЯН, Давид АХВЕРДЯН**

**Институциональные основы социально-экономических реформ Армении**

*Ключевые слова: социально-экономические реформы, институциональная система, демократия, экономическая свобода, экономический рост*

В начальной стадии социально-экономических преобразований в Армении предполагалось, что достаточно изменить (разрушить) институциональные основы централизованного управления экономики и страна дополнит ряды самых развитых стран мира. Однако, как показывают исследования, легкость внедрения новых норм «сверху» обманчива. Основной критерией качества институциональной системы является её целостность, которая понимается в двух смыслах: в полноте состава и тесноте связей между элементами институциональной системы, а также в соответствии этой системы общему вектору социально-экономического развития каждой страны.

**Grigor NAZARYAN, Davit HAKHVERDYAN**

**Institutional foundations of social and economic reforms in Armenia**

*Keywords: Socio-economic reforms, institutional system, democracy, economic freedom, economic growth.*

In the initial stage of socio-economic reforms it was assumed, that changing (collapsing) institutional foundation of centralized economic system will be enough and the country will supplement the ranks of the most developed countries of the world.

However, studies show that the ease of introducing new standards for “above” is misleading. The main criterion for the quality of the institutional system is its integrity, which is understood in two senses: in the fullness of the composition and strength of links between elements of the institutional system, as well as under this system, the general vector of socio-economic development of each country.